ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» հունիսի 2021 թվականի N 109

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՅԱԹ ՆՈՎԱ ԹԱՂԱՄԱՍԻ 30 ՏԱՆ ԲՆԱԿԻՉ ԿԱՐԵՆ ԹՈՒՆՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեպանավան Սայաթ Նովա թ. 30 տան բնակիչ Կարեն Թունյանի 27.05.2021թ. N Թ-243 դիմումը, Ստեփանավան համայնքի ավագանու 09.04.2020թ. թիվ 22-Ա որոշումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի վարչական տարածքից 15.586 հա 4-րդ կարգի արոտ 06-007-0293-0001 ծածկագրից վարձակալության իրավունքով տրամադրել Կարեն Թունյանին համաձայն կից տրվող հողամասի հատակագծի:
2. Կարեն Թունյանի հետ կնքել հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր 1 տարի ժամկետով, վարձավճարի չափ սահմանելով՝ տարեկան 43.000 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հունիսի 2021 թվականի N **110**

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ 1ա ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Համազասպ Հովհաննիսյանի կողմից ներկայացված 08.06.2021թ. թիվ Հ-259 դիմումը, 26.12.2011թ. տրված թիվ 2533175 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Ստեփանավան քաղաքի Անտառային 1ա բնակելի տան հասցեի նոր փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, Անտառային փողոց 8/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հունիսի 2021 թվականի N **111**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0057-0013 ԾԱԾԿԱԳՐԻ Գ.ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 53/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գևորգ Միքայելի Ջիլավյանի կողմից ներկայացված 29.01.2021թ. թիվ Ջ-50 դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան Գ.Նժդեհի փողոց թիվ 53/1 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառույցված խանութի շենքի օրինականացնելու խնդրանքը, 08.11.2012թ. N 08112012-06-0197 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «ԱՐՏՑՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունը կառուցված չէ քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ-ի թիվ 2387 որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ք. Ստեփանավան Գ.Նժդեհի փողոց թիվ 53/1 հասցեի, Գևորգ Միքայելի Ջիլավյանին սեփականության իրավունքով պատկանող 06-007-0057-0013 ծածկագրի տակ գտնվող 0.025 հա հողամասում 2013թ. ինքնակամ կառուցված՝ 34.4 քմ արտաքին մակերեսով խանութի շենքը:
2. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 34.4 քմ արտաքին մակերեսով խանութի շենքի համար 59168.0 /հիսուն ինը հազար մեկ հարյուր վաթսունութ/ ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված խանութի շենքի օրինականացման համար նախատեսված գումարը, վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255001712 հաշվեհամարին:

3. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Հաստատել Ստեփանավան քաղաքի Գ. Նժդեհի փողոց թիվ 53/1 հասցեի հողամասի նոր փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, Իսահակյան փողոց 33 խանութ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հունիսի 2021 թվականի N **112**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՄԱՏՐՈՍՈՎԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ ՃՇՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ք. Ստեփանավան Մատրոսովի փողոց թիվ 12 բնակելի տան հասցեի անշարժ գույքի սեփականատեր Վարդ Կարապետյանի կողմից ներկայացված 10.06.2021թ. թիվ Կ-263 դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան Մատրոսովի փողոց թիվ 12 հասցեում գտնվող հողամասի վրա նրա կողմից 2021թ.-ին ինքնակամ կառույցված շինությունները օրինականացնելու խնդրանքը, 31.01.2005թ. N1658474 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Ճշտել ք. Ստեփանավան Մատրոսովի փողոց թիվ 12 բնակելի տան հասցեի անշարժ գույքի ծածկագիրը, որը ըստ կադաստրային քարտեզի գտնվում է 06-007-0078-0065 ծածկագրի տակ:
2. Օրինականացնել Վարդ Համբարի Կարապետյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող 06-007-0078-0065 ծածկագրերի տակ գտնվող՝ 0.0726 հա

հողամասում ինքնակամ կառուցված՝ 37.2 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը և 0.6 քմ պարիսպը:

3. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 37.2 քմ արտաքին մակերեսով անասնաշենքի համար 62240 /վաթսուներկու հազար երկու հարյուր քառասուն/ ՀՀ դրամ, 0.6 քմ պարիսպի համար 1010 /մեկ հազար տաս/ ՀՀ դրամ: Ընդհանուր ինքնակամ կառուցված շինությունների համար 63250 / վաթսուներեք հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ, որը պետք է վճարվի Ստեփանավանի համայնքապետարանի թիվ 900255001712 հաշվե համարին :
4. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**